նում. սակայն ողորմելի կլինէր այն ժողովուրդը, որ միայն երկրայինից է կազմուած։ Մեր ժողովրդի եկեղեցիները մեծ գործի են կոչուած և պէտք է որ այդ գործը գլուխ բերեն։ Մեր ժողովուրդը մեծ յաջողութիւններ է ունեցել։ Բայց մեր արդիւնաբերութեան զօրեղ զարգացումը մեզ այնպիսի հարցերի դէմ առ դէմ է կանգնացրել, որոնցով պէտք է հին աշխարհի ժողովուրդները երկար ժամանակ զբաղուէին։ Արդիւնաբերութեան այս յառաջադիմութիւնը նպաստեց թէ բարի և թէ չար ոյժերի զօրեղանալուն։ Չար ոյժերը մեր մեծ քաղաքներում աւելի են բազմանում, քան լրանք քաղաքները։ Եթէ մեր ժողովուրդը ուզում է աճել, այն ժամանակ նա չար ազդեցութիւնների հակառակ այնպիսի ոյժեր պէտք է գործ դնէ, որոնք բարւոյ յաջողութեանը նպաստեն։ Եւ ահա մեր եկեղեցիների պարտքն է աշխատել, որ բոլոր չար ոյժերը բարութեան փոխուին։ Առանց դորան աշխարհի այն մասում, ուր մենք ենք ապրում, կեանքը միայն անասնական կողմ կունենար։ Չունենանք դէպի բարութիւնը տանող ճգտում, այն ժամանակ մեր ժողովրդի կեանքը անսահման կոպիտ և նիւթապաշտ ընաւորութիւն կստանայ»։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նորին Ս. Օծութիւն Վեհ. Հայրապետը մի քանի կարևոր գործերի լուծումն առ տեղեաւն տալու նպատակաւ սեպտեմբերի 2-ին ուղևորուեց դէպի Տփխիս։

Մինչև Ալէքսանդրապոլ ուղեկցում էր Տպարանի կառավարիչ Տ. Մատթէոս վարդապետը, իսկ մինչև Տփխիս Տ. Կարապետ և Տ. Կորիւն վարդապետներ։ Նորին Սրբութիւնը միայն մի գիշեր հանգստանալով Ալէքսանդրապոլում, ամսի

3-ին՝ առաւօտեան ժամը 6-ի գնացքով շարունակեց ճանապարհը և Տփխիս հասաւ ցերեկուայ 4 ժ. 20 ր.-ին։ Տփխիսի կայարանում Նորին Սրբութեան դիմաւորեցին Գեր. Տ. Բարդուղիմէոս եպս. Բար. Տ. Արսէն, Տ. Գարեգին, Տ. Մամբրէ, Տ. Յովհաննէս վարդապետներ, և բաւական ժողովուրդ. դիմաւորողների ուղեկցութեամբ Նորին Սրբութիւնը իջաւ առաջնորդարան։ Նորին Սրբութիւնը այցելեց Տփխիսում ի միջի այլոց Կովկասի Տ. Կառավարչապետի օգնական Գեներ. Լէյտենանտ Գրեզէին, և ընդունեց նորա փոխադարձ այցելութիւնը։ Այցելութեան եկաւ նաև Տ. Նահանգապետի պաշտօնակատար Գնա. Սուէչին, որի հետ բաւական երկար խօսակցութիւն եղաւ գաղթականների վիճակի մասին։

Ներսիսեան Հոգևոր դպրանոցի տեսչական հարցին առժամանակեայ լուծում տրուեցաւ նորանով, որ Վ.Եհ. Հայրապետը հրամայեց Ճնալ նախկին տեսչին իւր պաշտօնում։ Ապա Բար. Տ. Գարեգին վարդապետի փոխարէն, որ կարևոր պաշտօնների համար Մայր Աթոռ պէտք է վերադառնար, Նորին Սրբութիւնը հրամայեց Բաղուի Հայոց եկեղեցեաց գործակալ Բար. Տ. Արսէն վարդապետին փոխադրուել Տփխիս և ստանձնել Կոնսիստորիայի նախանդամութեան և Ներսիսեան Հոգևոր դպրանոցի Հոգաբարձութեան նախագահի պաշտօնները։ Սեպտ. 15-ին Խաչվերացի տօնի օրը Նորին Սրբութիւնը հրամայեց Սանահնի վանուց վանահայր Գեր. Տ. Գարեգին եպիսկոպոսին պատարագել վանքի աւագ եկեղեցում և նոյն երեկոյեան կատարել վանքի դաւթում Խաչվերացի հանդէսը։ Թափօրին մասնակցում էին ինքը հանդիսադիր Գարեգին սրբազանը և Տ. Կիւրեղ, Արսէն, Կարապետ, Մամբրէ, Գարեգին և Բարգէն վարդապետներ, և մեծ թուով քահանաներ, ի ներկայութեան խուռն բազմութեան։ Նորին Սրբութիւնը, քիչ տկար լինելով՝ այդ երեկոյ եկեղեցի չիջաւ, բայց յաջորդ օրը պատուեց Իւր ներկայութեամբ Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ հանգուցեալ Գ. Եւանգուլեանի մահուան տարեդարձի առթիւ կատարուած հոգեհանգիստը, որին ներկայ էին նաև բազմաթիւ յարգողներ և բարձրաստիճան պետ. պաշտօնեաներ։

Նորին Սրբութիւնը ցանկանալով իւր Ս. Օծման Տարեդարձի ծոնը Մայր Աթոռում կատարել այս տարի՝ ամսիս 21-ին, ցերեկուայ գնացքով եկաւ Տփխիսից, ուղեկցութեամբ Գեր. Գարեգին եպս.-ի և Տ. Կիւրեղ, Տ. Արսէն և Տ. Կորիւն վարդապետների, և գիշերուայ ժամ 10-ին հասաւ Ղարաքիլիսէ, ուր մնաց և գիշերեց պ. Արովեանցների տանը։ Առաւօտեան մեկնեց դէպի Դիլիջան, ապա այդ տեղից Հաղարծնի վանքը, և Երևանի փոստային ճանապարհաւ ամսի 26-ին հասաւ ի Մայր Աթոռ։

Ամսիս 28-ին Հոգևոր ձեմարանի Տարեդարձը լինելով, ս. պատարագը սկսուեց ժամը 10-ին Մայր Տաճարում. պատարագիչն էր Տ. Կարապետ վարդապետը։ Պատարագից յետոյ ամբողջ միաբանութիւնը և ձեմարանի սաներ ըստ սովորութեան եկեղեցական թափօրով դուրս եկան Տաճարից և Տ. Գէորգ Երջանկայիշատակ Հայրապետի շիրմի վերայ կատարեցին հոգեհանգիստ։ Ապա բոլոր ներկայ եղող բազմութեան և ուխտաւորների հետ դիմեցին դէպի Հոգևոր ձեմարան, որի հիւսիսային գաւթում տեղի ունեցաւ սովորական հաշուետուութեան հանդէսը։ Տարեկան հաշիւը կարդաց Տ. Ցուսիկ վարդ., օգնական տեսչի ձեմարանի. ապա Հ. Կոմիտասի առաջնորդութեամբ երգեցիկ խումբը երգեց, և հանդէսը փակուեց պահպանիչով։

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին ամբողջ միաբանութիւնը եկեղեցական հանդիսաւորութեամբ, ամպհովանիով և խաչ ու խաչվառով խմբուեցան վեհարանի արտաքին դրան մօտ։ Նորին Սրբութիւնը Հայրապետական շքով ու հրաշափառով եկեղեցի իջաւ և նախագահեց իրիկուան ժամերգութեան։ Նոյն երեկոյ Հոգևոր ձեմարանում դրական հանդէս կար և պատրաստուած էր շքեղ լուսավառութիւն. պարտիզում զբօսնում էր ուխտաւորաց և Վաղարշապատցւոց հպարտաւոր բազմութիւնն ու հաճութեամբ լսում Հ. Կոմիտասի խմբի ժողովրդական լէլէներն և քառաձայն երգերը, մինչև գիշերուայ ժամը 10-ը։

Կիրակի, Վարագայ խաչի տօնին, Նորին Սրբութիւնը ներկայ եղաւ առաւօտեան ժամերգութեան, որի աւարտելուց յետոյ, բարեհաճեց Մայր Տաճարում թոյլ տալ միաբանութեան և աշակերտաց շնորհաւորել տօնը մատչելով ի համբոյր օծեալ աջոյն։ Պատարագից յետոյ ներկայացան Երևանի Գեր. Փոխ. Թեմական Տ. Սուքիաս Արքեպիսկոպոս, Հոգ. դպրանոցի հոգաբարձուների հետ։ Նորին Սրբութիւնը, թէպէտ յոգնած՝ շնորհ բերեց իջնելու միաբանից սեղանը։ Այստեղ առաջին բաժակն ինքը Նորին Սրբութիւնը կանխեց խմել Միաբանութեան կենաց, յայտնելով իւր հայրական շնորհակալիքն և հայրապետական օրհնութիւնը նորա արտայայտած որդիական անկեղծ զգացմանց համար։ Խօսեց ս. Էջմիածնի անցեալի և ներկայի մասին. բացատրեց նորա կատարած դերը հայութեան պատմական կեանքի մէջ և իւր ժողովրդեան գէպի իւր Մայր Աթոռ ցոյց տուած ծառայութիւնն ու սէրը, որի պահպանութեան և պայծառութեան համար չի խնայել իւր վերջին լուման, և այն անցեալ այնպիսի դարերում, երբ խաւարն ու ժամանակի բռնապետութիւնը իւր ընչաքաղցութեան բաժինն էր պահանջում, և հայոց հայրապետները բոկոտն և շղթայակապ ժողովրդի մէջ շրջում էին՝ նորանից ընդունած լումաներով գերութիւնից ազատելու Աթոռը։ Ապա, միացնելով՝ բաժակ առաջարկեց յանուն Մայր Աթոռի հաստատութեան և հայ ժողովրդի յարատև բարօրութեան. օրհնեց բոլորին և մեկնեց հանգստանալու։ Նորին Սրբութեան կենացը առաջարկեց Գեր. Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս. Միաբանութիւնը և հանդիսականները յոտնկայս խմեցին, մաղթելով երկար և անդորր տարիներ։ Ապա խօսեց Տ. Սիոն վարդապետ, բացատրելով Հայրապետական գաւազանի նշանակութիւնը։ Իւրաքանչիւր բանախօսութեանց վերջը երգում էր Հ. Կոմիտասի խումբը։

Նոյն երեկոյեան Մայր Տաճարի գաւիթը և վեհարանի հանդէպ տանիքները գեղեցիկ լուսավառութեամբ զարդարուած էին։ Վեհարանի մեծ մուտքի մօտ երգում էին ձեմարանի աշակերտները. իսկ Մայր Տաճարի շուրջը պարում էին Շիրակի և Սուրմալուի գիւղացիք՝ իրենց ժողովրդական

երգերն ու լէլէները երգելով։ Գիշերուայ ժամը 9-ին Նորին Սրբութիւնը երևաց վեհարանի արտաքին գահլիճի լուսամուտում և օրհնելով ամէնքին արձակեց, որ գնան հանգըստանան։ Ապա ձեմարանի աշակերտները Մայր Տաճարի գանգակատան առաջը հրապարակաւ կատարեցին իրենց հանգըստեան ազօթքը, և ամէնքը ցրուեցին։

Տակաւին ուշական հանդիսաւորութեանց մէջ՝ լուր հասաւ որ Նորին Բարձր Սրբազնութիւն Վրաստանի ս. Էջմիածնի Հոկտ. 1-ին պիտի ժամանէ Երևան և 2-ին այցելէ Նորին Սրբութիւն Վ.Եհ. Հայրապետին Մայր Աթոռում։ Հոկտ. 1-ին հասաւ հեռագիր Նորին Բարձր Սրբազնութիւնից յանուն Վ.Եհ. Հայրապետի, որով իւր Երևան ժամանելը ծանուցանելով, ցանկութիւն էր յայտնում այցելելու Մայր Աթոռ և Նորին Սրբութեան։ Հոգևոր Տէրը բարեհաճեց անմիջապէս հեռագրաւ խնդրել Նորին Բ. Սրբազնութեանը շնորհ բերել։ Նոյն օրը Վ.Եհ. Հայրապետի հրամանաւ Մինոզի անդամ Գեր. Տ. Յուսիկ եպս.-ը և Հոգևոր ձեմարանի տեսչի օգնական Տ. Յուսիկ վարդապետ Երևան մեկնեցին, ի դիմաց Հոգևոր Պետին հրաւիրելու Ն. Բ. Սրբազնութեանը ս. Էջմիածին՝ նորա արամադրութեան տակ դնելով Հայրապետական փակ կառքը։ Հոկտ. 2-ին Ն. Բարձր Սրբազնութիւնը ընկերակցութեամբ Երևանի նահանգապետ Կոմս Տիզենհաուզենի, նորա օգնական Իշխան Նախաշիձէի, նահանգական դատարանի դատախազի և իւր շքախումբը կազմող քահանաների, բարեհաճեց այցելել Մայր Աթոռը։ Ճանապարհին Ն. Բ. Սրբազնութիւնը ցանկացաւ տեսնել Զուարթնոց եկեղեցու պեղումները, որից շատ գոհ մնալով՝ ընծայեց Հ. Խաչիկ վարդապետին իւր ձեռքի համբիչը։ Գիւղում Ռուսաց մատուռի մէջ մաղթանք լինելուց և ռուս հասարակութեան օրհնելուց յետոյ, ժամը 3-ին հասաւ վանքի արտաքին մեծ դրան առաջ, ուր դիմաւորեցին Նորին Գերապատուութիւն Տ. Գրիգոր եպս. Գառնակերեան և Մինոզի անդամ Բարձր. Տ. Մխիթար վարդապետը։ Մայր Տաճարի դրան դիմաւորեց աւագ լուսարար

Գեր. Տ. Ղևոնդ եպս.-ը։ Իսկ ներսը Իջման սեղանի առաջ երկու կարգ շարուած սպասում էին միաբանութեան անդամներն իրենց գլուխն ունենալով Տ. Գէորգ Սուրէնեան և Տ. Արիստակէս Դաւթեան Արքեպիսկոպոսներին։ Նորին Բարձր Սրբազնութիւն աղօթելով Իջման սեղանի առաջ և ողջունելով Միաբանութեան ի դէմս Գեր. Գէորգ Արքեպիսկոպոսի՝ դիտեց մանրամասն Մայր Տաճարը, թանգարանը, ս. Մասանց խորանը, և ապա առաջնորդուեցաւ ի վեհարան։

Շատ սիրալիր եղաւ տեսակցութիւնը Նորին Սրբութեան Վեհափառ Հայրապետի հետ։ Սրբազան Էկզարխն իւր անսահման ուրախութիւնը յայտնեց մեր Հոգևոր Տիրոջը, որ արժանի էր եղել ոտք կոխել այն սրբավայրերում, ուր վաստակել և գործել է Հայոց ազգի մեծ նահատակ և Լուսաւորիչ Ս. Գրիգորը, և մատոյց առանձին շնորհակալութիւն իրեն եղած փառաւոր ընդունելութեան համար։ Ապա Նորին Սրբութիւնը հրաւիրեց Սրբազան հիւրին ճաշի գահլիճը, որտեղ առանձին սեղան էր դրուած նոցա երկոցունց համար։ Միւս սեղանի երկու գլուխները նստած էին Երևանի պ. նահանգապետը և Գեր. Տ. Գէորգ Արքեպս.-ը. նահանգապետի կողքին՝ Գեր. Արիստակէս Արքեպս.-ը, դիմացը փոխ. նահանգապետը, և այլք ըստ կարգի։ Ճաշը (որը պահոց էր) տևեց մօտ մի և կէս ժամ և այդ միջոցին փոխադարձաբար առաջարկուեցին Թագաւոր Կայսեր, Հոգևոր Տիրոջ, Բ. Սրբազան հիւրի, պ. նահանգապետի և ներկայ եղող հիւրերի կենաց։

Ճաշից յետոյ Ն. Բ. Սրբազնութիւն ցանկութիւն յայտնեց այցելելու Հոգևոր Ճեմարանը և ընկերակցութեամբ իւր հետևորդաց և շքախմբի առաջնորդուեց դէպի այնտեղ, ուր և ուսուցչական խմբի հետ բոլոր աշակերտները ժողովուած սպասում էին հանդիսարանում։ Այստեղ լսեց Հ. Կոմիտասի քառաձայն խմբի երգեցողութիւնը և շատ գոհ մնացած օրհնելով ուսուցչաց և աշակերտներին՝ վերադարձաւ վեհարան, ընդունեց Նորին Սրբութեան մօտ թէյ, և կրկին ու կրկին անգամ իւր շնորհակալիքը յայտնելով, տուեց հրաժեշտի ողջոյնը և ժամը 6½-ին ուղևորուեց դէպի երկաթուղու կայարան։ Մինչև Ղարխուն կայարանը ուղեկցում

էին Նորին Սրբութեան կողմից երկու Հ. Եղիշէ վարդապետներ՝ Մուրատեան և Ա.հարօնեան։

Սեպտ. 15-ին Մայր Աթոռ եկաւ և մի քանի օր հիւր եղաւ Ճափոնացի ուսանող երիտասարդ պ. Մ. Ինուէ, որ առանձնապէս հետաքրքրուում էր մեր եկեղեցու պաշտամունքով, և Հայոց Հայրապետին տեսնելու ցանկութեամբ յետաձգեց իւր մեկնելը, մինչև Նորին Սրբութեան Տփխիսից վերադարձը. ապա մեկնեց դէպի Մոսկուա և Պետերբուրգ։ Պարոնը իւր հայրենիքում իրաւաբանական կրթութիւն ստանալուց յետոյ շարունակում է ուսումը Գերմանիայում. խօսում էր գերմաններէն և անգլիերէն։

Սեպտ. ամսուայ ընթացքում Մ. Աթոռս եկան ժամանակաւորապէս Արցախի Գեր. Տ. Թեմական Գրիգոր եպս. Գառնակերեան, Ատրպատականի Թեմականը, Նախիջևանի փոխանորդ՝ Տ. Սիոն, Ն. Բայազիտի գործակալ Տ. Խորէն վարդապետներ։

Հոկտեմբերի 26-ին այցելեցին Մայր Աթոռ Ֆրանսիացի երեք կոմսեր՝ պարոնայք Մարսէ, Պուլնօլսաէն և Վաննէյ, որոնք մի գիշեր հիւրասիրուելով և տեսնելով վանուցս հնութիւնները և հաստատութիւնները, մեկնեցին դէպի Երևան և Սևան։

Նորին Սրբութեան բարեհաճ հրամանաւ Մողնուոյ վանահայր Տ. Գէորգ վ. Ռշտունին փոխադրուեց նոյն պաշտօնով Խորվիրապի վանքը. իսկ Մողնուոյ վանահայր կարգուեց Տ. Ղուկաս վարդ. Եղիազարեան։

Սեպտեմբերի 26-ին Երևանի Թեմական. Հոգ. դպրանոցի Հոգաբարձութիւնն իւր ժողովում միաձայն Թեմ. դպրանոցի

Տեսուչ էր ընտրել Արժ. Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեանին, որ և հաստատուեց Հայրապետական կոնդակով։

Հոկտ. 4-ին Կ. Պոլսից, Ամենապատիւ Օրմանեան Սրբազանից, ստացուեց յանուն Նորին Սրբութեան Վ.Հ. Հայրապետին հետևեալ հեռագիրը. «Արքեպիսկոպոս Սահակ Խապայեան միաձայն ընտրուած է Կիլիկիոյ կաթուղիկոս. Պատրիարք Մաղաքիա»։

Նորին Սրբութիւն Վ.Հ. Հայրապետն ի նկատի ունենալով Մայր Աթոռոյս աւագագոյն միաբան Գեր. Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանի ծերութիւնը, հրաւիրեց Նորին Բ. Սրբազնութեան հանգիստ վայելելու Մայր Աթոռում. իսկ նորա տեղ վանահայր կարգեց Երնջակի Ս. Կարապետ վանուց Բար. Տ. Գրիգորիս վարդապետ Տ. Յակոբեանին, որ արդէն ուղևորուեց իւր պաշտօնավայրը։

Նարիւն վարդապետ.

ՆՈՒԷՐ Մ. ՏԱՃԱՐԻՆ

Բաղդի յայտնի վաճառական պ. Միրզա Սարուխանեան յանուն Վ.Հ. Հայրապետի նուէր է ուղարկել մի գեղեցիկ թուրքմէնի գորգ։ Մի արժէքաւոր նկարէն կտոր ևս նուիրել է՝ իբրև ծածկոց Իշման Սեղանի պատուանդանի, նորա ամուսին Տ. Աննա։ Մ. Տաճարի աւագ լուսարար Գեր. Ղևոնդ եպիսկոպոս Նորին Վ.Հ. Հայրապետութիւնից ստացած լինելով նաև գորգը՝ ի գործածութիւն Մայր Տաճարի, հրապարակաւ շնորհակալութիւն է յայտնում բարեպաշտ ամուսիններին։